# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **05.05.2022թ.**

2022թ.-ի մայիսի 5-ին՝ ժամը 09:15-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ գրասենյակային կահույքի ձեռքբերման ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Ղուկասյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Տեխնիկական բաժնի պետ, |
| Ա. Սամվելյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Տեխնիկական բաժնի պետի տեղակալ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ղուկասյանը: Հանձնաժողովի անդամ Վ. Իսկանդարյանը (Գործերի կառավարիչ) բացակայում էր: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը՝ գնումների և մատակարարման բաժնի գնումների գլխավոր մասնագետը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 2 անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ

1. Սահմանված ժամկետում Ֆոտոն ՍՊԸ-ի և Առնատար ՍՊԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ, չեն ներկայացվել Պատվիրատուին:

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ֆոտոն ՍՊԸ-ի հայտերը՝ 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով և Առնատար ՍՊԸ-ի հայտը՝ 2-րդ չափաբաժնի մասով մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները:

2. Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ Ֆոտոն ՍՊԸ-ի և Առնատար ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, հիմք ընդունելով ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 2, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Աղասի Ղուկասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Արսեն Սամվելյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Անահիտ Առաքելյան ____________